ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ՀՀ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՅՈՒԼԻԱՆԱ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՀՀ հանրակրթության համակարգը վերջին տարիներին ինտենսիվ բարեփոխումների է ենթարկվում: Խոսքն ինչպես ծրագրային փոփոխությունների մասին է, այնպես էլ կազմակերպահրավական փոխակերպումների: Այս շարքում առանցքային կարևորություն ունի ավագ դպրոցների համակարգի ստեղծումը: Հայեցակարգով նախատեսված է, որ ավագ դպրոցների գործառույթներից մեկը պետք է լինի մասնագիտական կողմնորոշումը: Տվյալ հոդվածում կքննարկվեն ավագ դպրոցում մասնագիտական կողմնորոշում ապահովելու հնարավորություններն ու հեռանկարները:

Ինչպես նշում է Ռ. Շաուլը Պ. Ֆրեյրեի գրքի նախաբանում. «Կրթական գործընթացը չեզոք չի լինում: Կրթությունը գործառում է կա՛մ որպես կրտսեր սերնդի մուտքը գործող համակարգի տրամաբանության մեջ դյուրինացնող գործիք, կա՛մ դառնում է «ազատության պրակտիկա»՝ կանանց և տղամարդկանց համար իրականության մեջ քննադատաբար և ստեղծարար գործառելու միջոց...»[1]:

Նմանապես ավագ դպրոցում դեռահասների մասնագիտական կողմնորոշման գործընթացը լուրջ մարտահրավեր է հասարակության և կրթական համակարգի համար: Այն միանգամայն տարբեր նպատակներ կարող է հետապնդել: Իհարկե, մասնագիտական կողմնորոշման գերնպատակ են աշխատուժի վերարտադրությունը և տնտեսության զարգացումը: Սակայն մինչ դրան հասնելը անհրաժեշտ է առանձնացնել մասնագիտական կողմնորոշման հետևյալ ռազմավարությունները: Առաջին և առավել ակնհայտ ուղղությունը աշակերտի ունակություններին և հակումներին համապատասխան մասնագիտության ընտրությունն է, որը ենթադրում է աշակերտի ունակությունների և հակումների բացահայտման համար կրթական բարենպաստ պայմանների ստեղծում, աշակերտին համապատասխան մասնագիտության ընտրության ուղղորդում և աշխատաշուկայում իր համար աշխատատեղ որոնելու հարցում շուկայական մեխանիզմներին ապավինում:

[1] **Freire P.**, Pedagogy of the oppressed, The continuum international publishing group, New York, 2005, p. 34.

Հաջորդ տարբերակը աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող մասնագիտության ընտրության ուղղորդումն է՝ հաշվի առնելով թափուր աշխատատեղերը և ապահովելով աշակերտների ապագա զբաղվածության բարձր հավանականությունը: Եվ երրորդ ուղին ուղղորդումն է դեպի նորարարական մասնագիտություններ, որոնք կապահովեն հասարակության՝ տնտեսական, սոցիալական և գիտական հետագա զարգացումը: Այս ուղին առավել ռիսկային է, քանի որ վերաբերում է սոցիալական և տնտեսական կանխատեսումներին և ընդամենը հավանական բնույթ ունի:

Իհարկե, նշված երեք նպատակները երբեք իրարից անկախ և բացառապես առանձին հանդես չեն գալիս մասնագիտական կողմնորոշման և աշխատուժի վերարտադրման գործընթացում: Սակայն յուրաքանչյուր համակարգ ունի այս կամ այն գերակայությունները:

Անդրադառնալով մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ առկա գիտական մոտեցումներին՝ կարելի է առանձնացնել մասնագիտական կողմնորոշման տեսության հիմնադիր ամերիկացի գիտնական Ֆ. Պարսոնսի եռագործոն մոդելը[2], որը հիմնականում ճանաչողատեղեկատվական բնույթ ունի: Նրա կարծիքով, մասնագիտության ընտրությունը պետք է հիմնվի՝

- սեփական անձի, հակումների, ունակությունների, հետաքրքրությունների, ռեսուրսների և այլ որակների մասին հստակ պատկերացումների վրա,
- գործունեության տարբեր բնագավառներում հնարավորությունների և հեռանկարների, փոխհատուցումների, առավելությունների և թերությունների, հաջողության հասնելու պահանջների և պայմանների ճանաչման վրա,
- նշված երկու գործոնների հիմնավորված և ճիշտ համադրության վրա:

Կառուցվածքաբանական տեսություններում հատուկ ուշադրություն է դարձվում կյանքի փուլերին, և յուրաքանչյուր փուլում առանձնացվում է մասնագիտական կողմնորոշման վրա ազդող որոշակի գործոն, ինչպես նաև փորձ է արվում ուրվագծել ստեղծագործելու առավել արդյունավետ միջոցները[3]:

Ուշադրության արժանի է նաև Դ. Սուպերի՝ ես-կոնցեպցիայի ձևավորումը որպես մասնագիտական կողմնորոշման գործոն կարևորող մոտեցումը[4]: Նա առանձնացնում է անձի մասնագիտական կայացման հինգ փուլ, իսկ մասնագիտական կարիերան դիտում է դինամիկ

---

[2] Տե՛ս **Parsons F.**, Choosing a Vocation, Houghton Mifflin Company, Boston, 1909:

[3] Տե՛ս **Левин К.** Юность – это не смертельно, так только кажется. СПб., 2006:

[4] Տե՛ս **Super D.**, Career Education and the meaning of work, University of Michigan, Washington, 1976:

երևույթ՝ ընտրության հնարավորությունների չընդհատվող շղթա:

Մասնագիտական կողմնորոշումը կարելի է համարել մասնագիտական կայացման վաղ փուլում ապագա մասնագիտության անհատական ընտրության և՛ գործընթաց, և՛ արդյունք: Մասնագիտական կողմնորոշումների ձևավորումը և հասարակության մասնագիտական կառուցվածքի վերարտադրումը բազմափուլ գործընթացներ են: Դրանց ուսումնասիրությունը պահանջում է հետազոտություններ մասնագիտական կողմնորոշման համակարգում բոլոր շահագրգիռ կողմերի՝ մասնագիտական կողմնորոշմամբ զբաղվող մասնագիտացված պետական և ոչ պետական կառույցների, ավագ դպրոցների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, բուհերի, ինչպես նաև աշակերտների, ուսանողների, ծնողների և գործատուների ընդգրկմամբ: ԵՊՀ սոցիոլոգիական հետազոտությունների լաբորատորիան 2015 թվականին իրականացրել է հետազոտություն, որի նպատակն էր ուսումնասիրել ավագ դպրոցներում աշակերտների մասնագիտական դիրքորոշումների ձևավորման մեխանիզմները, դրանց վերարտադրության օբյեկտիվ և սուբյեկտիվ նախապայմանները: Դա հնարավորություն տվեց որոշակի եզրահանգումներ անելու ներկայումս ՀՀ ավագ դպրոցում մասնագիտական կողմնորոշման գործընթացի վերաբերյալ:

ՀՀ-ում ավագ դպրոցների ստեղծումը մի շարք կրթական, տնտեսական և նորարարական նպատակներ էր հետապնդում, որոնցից է սովորողների մասնագիտական կողմնորոշումը: Ավագ դպրոցի առանձնացման առանցքային նպատակը մասնագիտական կողմնորոշում ունեցող սովորողին հոսքային և ենթահոսքային դասարաններում իր ապագա մասնագիտության խորը ուսուցում ապահովելն է, ինչը ենթադրում է, որ պետությունը պետք է մասնագիտական կողմնորոշման հստակ տեսլական ունենա: Խոսքը վերաբերում է ոչ միայն բուհում կրթությունը շարունակելուն, այլև արհեստագործական ուսուցմանը, որի կազմակերպման համար ավագ դպրոցներում կարող են արհեստագործական հոսքեր բացվել՝ նման ուղղվածության կրթություն ստանալու ցանկություն ունեցող սովորողների առկայության դեպքում:

Ավագ դպրոցը հայեցակարգում ներկայացվում է որպես նախամասնագիտական կրթություն տրամադրող օղակ, որը ենթադրում է, որ հիմնական դպրոցից հետո երեխան պետք է որոշակի մասնագիտական կողմնորոշում ունենա: Սա բավական հակասական է. հիմնական դպրոցի մակարդակում մասնագիտական կողմնորոշմանը միտված գործընթացներ նախատեսված չեն. ստացվում է, որ այնքան կարևոր գործընթաց, ինչպիսին է մասնագիտական կողմնորոշումը, ավարտվում է՝ դեռևս չսկսված: Միևնույն ժամանակ ավագ դպրոցը դառնում է միջանկյալ օղակ՝ հիմնական կրթությունից դեպի մասնագիտական

կրթություն: Սա ենթադրում է, որ ավագ դպրոցների և բուհերի կապը բավականաչափ սերտ պետք է լինի: Սակայն հենակետային ավագ դպրոցների ստեղծման պրակտիկան ՀՀ-ում բավական դանդաղ է ընթանում: Այսպիսի դպրոցներ Հայաստանի բուհերից շատ քչերն ունեն:

Այսօր ավագ դպրոցում մասնագիտական կողմնորոշումը հիմնականում իրականացվում է հոսքային ուսուցման միջոցով: Այսինքն՝ եթե երեխան կրթությունը շարունակելու որոշակի նախասիրություններ ունի, նա ընտրում է այս կամ այն հոսքը: Հանրապետությունում գործում են նաև տարբեր թեքումներով դպրոցներ՝ արվեստի, սպորտի, սակայն ոչ բոլոր մարզերում են դրանք հասանելի: Ուստի ավագ դպրոցում մասնագիտական կողմնորոշման հնարավորությունները սահմանափակվում են առաջարկվող հոսքերով և ենթահոսքերով: Գործող ավագ դպրոցների մեծ մասը հիմնականում ունի 3 հոսք՝ հումանիտար, ֆիզմաթ և կենսաքիմիական: Ավագ դպրոցներում ենթահոսքեր ձևավորվում են շատ հազվադեպ: Ենթահոսքերի քիչ լինելու պատճառն առաջին հերթին տնտեսական է, այնուհետև՝ կադրային, ապա՝ ծրագրային: Ենթահոսքի ձևավորման պարագայում ԿԳ նախարարությունն առանձին ենթահոսքերի ծրագրեր և դասագրքեր չի մշակում, այդ գործառույթը մնում է դպրոցի վրա: Փաստորեն պարզ չէ, թե ով և ինչ միջոցներով պետք է մշակի ենթահոսքի ծրագիրը:

Մի կողմից հոսքային/ենթահոսքային կրթության ապահովումն ուղղված է մասնագիտական կողմնորոշմանը, իսկ մյուս կողմից տասներորդ դասարանում սահմանափակվում է երեխայի կրթությունը հոսքին/ենթահոսքին համապատասխան առարկաների ցանկով, և հետևաբար՝ այլ առարկաներ ու մասնագիտություններ ճանաչելու հնարավորությունը: Պետք է նշել, որ ըստ «Հանրակրթության մասին» օրենքի (հոդված 6, կետ 5), ուսումնական առարկաներին հատկացվող պարտադիր նվազագույն ժամաքանակը ավագ դպրոցում չի կարող լինել ընդհանուր նորմատիվային ժամաքանակի 30 %-ից պակաս: Սա նշանակում է, որ մինչև 70 % ժամաքանակը կարող է հատկացվել կամընտրական առարկաներին: Սակայն հետազոտությունների արդյունքները վկայում են, որ օրենքով ընձեռված նման ճկունության հնարավորությունն իրականում չի օգտագործվում:

ՀՀ ավագ դպրոցներում նախատեսված է նաև ընդհանուր հոսք ունենալու հնարավորությունը, բայց դա շատ հազվադեպ է ձևավորվում: Վերջինս բնորոշ է գյուղական համայնքների միջնակարգ դպրոցների բարձր դասարաններին, որոնք աշակերտների բավարար քանակ չունենալու պատճառով չեն կարողանում ձևավորել հոսքեր և ենթահոսքեր: Այնինչ ընդհանուր հոսքը երեխաներին ապահովում է գիտելիքների ավելի լայն շրջանակ և մասնագիտական կողմնորոշման հնարավորություն: Մասնագիտական կողմնորոշումը դեռահասության փուլում

ենթադրում է հնարավորինս շատ բնագավառներից տեղյակ լինել, քանի որ հետագայում կարող է աշխատաշուկան պահանջի, որ շրջանավարտը այլ հարակից մասնագիտությամբ զբաղվի, մասնագիտացումը փոխի, ուրիշ աշխատանք կատարի:

Հոսքային դասարաններին վերաբերող ևս մեկ խնդիր պայմանավորված է կրթության համակարգում դրանց կարգավիճակի անհստակությամբ, ինչն իմաստազրկում է հոսքային կրթությունը: Հոսքի ընտրությունը, ոչ մի կերպ չի նպաստում երեխայի հետագա խորացված ուսումնառությանը: Ավարտական քննությունները նույնն են, որևէ սահմանափակում կամ առավելություն չկա տարբեր հոսքերի շրջանավարտների համար բուհ ընդունվելիս: Հոսքային կրթությունը չի ապահովում նաև ծրագրային ճկունություն, որը հնարավորություն կտար առարկաները դասավանդելու այն ծավալով և խորությամբ, որն անհրաժեշտ կլինի այս կամ այն մասնագիտությունն ընտրած աշակերտին: Բոլոր երեխաները, անկախ մասնագիտացումից, ստիպված են ուսումնասիրել, օրինակ, ֆիզիկա՝ տվյալ հոսքի համար նախատեսված ծրագրով: Համակարգը կարծրացած է, բոլոր դպրոցների համար՝ ընդհանուր: Դրա հետևանքով երեխաների մի մասը հիասթափվում է, կորցնում է սովորելու շարժառիթը՝ հիմնավորելով, որ դասավանդվող նյութն իրեն պետք չէ: Բնականաբար սա անպարտաճանաչ աշակերտների համար դառնում է նաև դասապրոցեսից խուսափելու պատրվակ:

Ի սկզբանե բարեփոխումը նախատեսում էր ավագ դպրոցների առանձնացում ՀՀ բոլոր բնակավայրերում: Դա ենթադրում էր, որ փոքր գյուղական համայնքների երեխաները պետք է հաճախեին գյուղական կամ քաղաքային հարևան համայնքի ավագ դպրոցը, ինչը կարող էր լուրջ խնդիրներ առաջացնել՝ ֆինանսական, տրանսպորտային, ժողովրդագրական: Պակաս անհանգստացնող չէր նաև սահմանամերձ գյուղերի դատարկման վտանգը դպրոցի բացակայության պատճառով: Ուստի որոշում կայացվեց գյուղական համայնքներում պահպանել 12-ամյա կրթություն տրամադրող միջնակարգ դպրոցները: Սակայն գյուղական համայնքներում միջնակարգ դպրոցների առկայությունը ակամայից պարտադրեց, որ գյուղաբնակ սովորողները հաճախեն միջնակարգ դպրոցներ՝ փաստացի զրկվելով այլընտրանքից՝ ավագ դպրոցում սովորելու, հետևաբար՝ մասնագիտական կողմնորոշմանը համապատասխանող հոսքային կրթություն ստանալու հնարավորությունից: Ավագ դպրոցների հոսքային և ենթահոսքային կրթությունը հնարավորություն չտվեց նաև հաշվի առնելու համայնքային (քաղաքի, գյուղի) առանձնահատկությունները: Դպրոցը չունի բավական ազատություն, որ ինքնուրույն կազմի ուսումնական ծրագիրը՝ հիմնվելով տվյալ տարածքի բնակչության կարիքների և աշխատաշուկայի պահանջների վրա:

Միջազգային փորձի վերլուծությունը վկայում է, որ ավագ դպրոցում մասնագիտական կողմնորոշում ապահովելու համար անհրաժեշտ է մասնագետի հաստիք: Այս մասնագետը իրականացնում է բավական բարդ և բազմագործառույթ աշխատանք՝ ուղղորդում և կողմնորոշում է սովորողին: «Այբ» դպրոցը հանրապետությունում եզակիներից է, որն ունի մասնագիտական կողմնորոշման մասնագետ, որը երեխաների հետ զրույցների ընթացքում պարզում է նրանց հակումները, ցանկությունները, կարող է խորհուրդ տալ՝ ինչ առարկաներ ընտրի աշակերտը, որ բուհ դիմի, ընդհուպ նշված բուհի փաստաթղթերը լրացնելու և կրթաթոշակ ստանալու հարցերում աջակցության տրամադրում:

Հաճախ աշակերտը չգիտի՝ ինչ մասնագետ է ուզում դառնալ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ այսօր դեռահասների մեծ մասը, չունենալով մասնագիտական կողմնորոշման գործում մասնագիտական աջակցություն ստանալու հնարավորություն, հիմնականում առաջնորդվում է ծնողների ու հասակակիցների խորհուրդներով, ինչպես նաև հասարակական կարծրատիպերով, ուստի առավել հաճախ ընտրում է տնտեսագետի կամ իրավաբանի մասնագիտությունները՝ առանց դրանց վերաբերյալ հստակ պատկերացումների: Այս մասնագիտությունները Հայաստանում համարվում են առավել եկամտաբեր, հեղինակավոր և հեռանկարային: Ժամանակակից այնպիսի մասնագիտություններ, ինչպիսիք են գենային ինժեներիան, նանոտեխնոլոգիաները, քիմիական մոդելավորումը և այլն, երբևէ չեն հայտնվում աշակերտների տեսադաշտում և ցանկությունների շարքում: Առանց ծանոթանալու ժամանակակից մասնագիտությունների անսահման բազմազանությանը, դեռահասները ընտրություն են կատարում մասնագիտությունների շատ նեղ ցանկից:

Վերոնշյալ բոլոր խնդիրների հիմքում ընկած են մի կողմից մասնագիտական կողմնորոշման կուռ տեսլականի բացակայությունը, մյուս կողմից՝ կիրառվող մեթոդական մոտեցումների սակավությունը:

Մասնագիտական կողմնորոշման կազմակերպման տարբեր ռազմավարություններ են հայտնի: Վերջին տարիների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված գործողությունների շարքում կարելի է նշել ՀՀ քաղաքային բնակավայրերում բուհերի համապատասխան բաժինների ակտիվացումը: Բուհերի և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչները այցելում են ավագ դպրոցներ, ներկայացնում են իրենց ուսումնական հաստատությունները, գովազդում ծառայությունները և երեխաներին ուղղորդում՝ դիմելու իրենց ուսումնական հաստատություն:

Մասնագիտական կողմնորոշման ևս մեկ ձև է ուսուցչական անձնակազմում գործնական մասնագիտական մեծ փորձ և հաջողություններ ունեցող մարդկանց ընդգրկումը:

Կան ավելի պարզ ու խնայողական տարբերակներ: Եթե աշակերտները որևէ ոլորտում հետաքրքրություններ ունեն, ապա ստանում են հանձնարարություն՝ խորությամբ ուսումնասիրել այդ մասնագիտությունը, ոլորտը, այդ մասնագիտությամբ առավել հաջողակ մարդկանց կյանքի և մասնագիտական առաջընթացի պատմությունը և հիմնավորված որոշում կայացնել:

Մասնագիտական կողմնորոշման արդյունավետ մեթոդ է անմիջապես աշխատավայրեր աշակերտական էքսկուրսիաների կազմակերպումը, որը լայնորեն կիրառվում էր խորհրդային ժամանակաշրջանում: Երբ միջին և բարձր դասարանների աշակերտներն այցելում էին տարբեր արտադրամասեր, գործարաններ, բանկեր և այլ կազմակերպություններ ու հիմնարկություններ, տեսնում տարբեր մասնագետների (բանվորից մինչև ղեկավար պաշտոն զբաղեցնող բարձր որակավորում ունեցող մասնագետ) աշխատանքը բնական պայմաններում, պատկերացում կազմում, թե ինչով է զբաղվում այս կամ այն մասնագետը, և ինչով են իրենք զբաղվելու, եթե այդ մասնագիտությունն ընտրեն:

Մասնագիտական կողմնորոշման ժամանակակից մոտեցումները հիմնվում են Ե. Կլիմովի առաջարկած «Ուզում եմ – Կարող եմ – Պետք է» բանաձևի վրա[5]: Այսինքն՝ մասնագիտության ընտրությունը կարելի է համարել արդյունավետ, եթե հաջողվել է համադրել աշակերտի ցանկությունները, ունակությունները և հասարակության պահանջարկը:

Մասնագիտական կողմնորոշման հիմնական մեթոդները կարելի է դասակարգել՝ ըստ մասնագիտական կողմնորոշման հիմնական նպատակների: Դրանք են տեղեկատվական, գովազդային և քարոզչական մեթոդները: Նշված նպատակներին կարելի է հասնել հետևյալ մեթոդական հնարքների միջոցով.

- մասնագիտական կողմնորոշման առանձին դասաժամեր ավագ դպրոցում,
- աշակերտներին տեղեկատվական գրականության տրամադրում,
- համացանցային որոնողական համակարգերի կիրառում դպրոցներում,
- դեմ առ դեմ խորհրդատվություններ,
- խմբային խորհրդատվություններ,
- տեսաֆիլմերի դիտում և քննարկում մասնագիտական կողմնորոշման մասնագետի հետ,
- էքսկուրսիաներ ձեռնարկություններ, հիմնարկություններ և ուսումնական հաստատություններ,
- հանդիպումներ մասնագետների հետ հատուկ հատկացված դասաժամերի ընթացքում,

[5] Տե՛ս **Климов Е.** Как выбрать профессию? М., 1990:

- ԶԼՄ միջոցով մասնագիտությունների ներկայացում:

Մասնագիտական կողմնորոշման կարևոր բաղադրիչ է նաև մասնագիտական ախտորոշումը: Այն ենթադրում է ինքնաճանաչման գործում աջակցություն փակ և բաց հարցերով՝ անհատական և խմբային զրույցներ, մասնագիտական մոտիվացիայի հարցաթերթիկներ, մասնագիտական հմտությունների և ունակությունների վերաբերյալ հարցումներ, պրոյեկտիվ թեստավորում, դիտարկումներ, միջնորդավորված ինֆորմացիայի հավաքում, հոգեֆիզիոլոգիական հետազոտություններ, մասնագիտական փորձեր, խաղային և թրեյնինգային իրավիճակների օգտագործում: Մասնագիտական ախտորոշումը հնարավորություն է տալիս բացահայտելու սովորողի հետաքրքրություններն ու ցանկությունները («Ուզում եմ») և կարողությունները («Կարող եմ»):

Աշակերտներին բարոյահուզական աջակցությունը նույնպես մասնագիտական կողմնորոշման կարևոր բաղադրիչ է, որը իրականացվում է հետևյալ մեթոդներով՝ շփման խմբեր, թրեյնինգներ, անհատական և խմբային հոգեթերապիա, դրական օրինակների, հաջողության պատմությունների ներկայացում:

Ավելի ծավալուն բաղադրիչ է մասնագիտական ընտրություն կատարելու և որոշում կայացնելու գործում աջակցությունը: Այն ենթադրում է կոնկրետ քայլերի հաջորդականության նախագծում, ընտրված մասնագիտությունը ստանալու ճանապարհին շարունակական աջակցություն, ինչպես նաև տվյալ մասնագիտությունը ձեռք բերելու այլընտրանքային ուղիների դիտարկում: Այս ընթացքում առանձնահատուկ կարևորություն է ստանում ակտիվացման մեթոդիկան[6], որը երբեմն շփոթում են խաղի մեթոդիկայի հետ, սակայն այն իր առանձնահատկություններն ունի: Դրանք են՝ մեթոդիկայի գրավչությունը աշակերտների համար, քննարկվող հարցերով անձնական հետաքրքրվածությունը: Այն դեպքերում, երբ քննարկվող հարցերը դեռևս չեն դարձել աշակերտների համար անձնական հետաքրքրության առարկա, անհրաժեշտ է կիրառել այլ մեթոդիկաներ: Օրինակ՝ էմոցիոնալ փոխվստահության հաստատում այլ՝ ավելի պարզ և աշակերտին հոգեհարազատ խնդիրների դիտարկման և քննարկման միջոցով: Ակտիվացումը երկմակարդակ մեթոդիկա է, այստեղ համադրվում են իրական և մտացածին գործողությունների պլանները: Օրինակ՝ մասնագիտական կողմնորոշման մասնագետը և աշակերտը կարող են մտովի տեղափոխվել այլ ժամանակահատվածներ, այլ իրավիճակներ, աշխատել վերացական կերպարների հետ և այլն: Ընդունված է ասել, որ որքան ավելի արտահայտված է մտացածին գործողությունների պլանը, այնքան ավելի

[6] Տե՛ս **Глебова М. В.** Методы психологической активизации продуктивной умственной деятельности учащихся // "Психология и педагогика на современном этапе". Материалы I международной научно-практической конференции. Ставрополь, 2011:

շատ են իրական ակտիվացման հնարավորությունները: Այնինչ իրական գործողությունների պլանը սահմանափակվում է իրական շատ հստակ պայմաններով և իրական գործողությունների սահմանափակ հնարավորություններով: Մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ կատարվող խորհրդատվությունը մեծապես ենթադրում է երևակայական օբյեկտների հետ կատարվող աշխատանք՝ յուրօրինակ «մտավոր գիտափորձ», որը պարունակում է աշակերտի ապագա մասնագիտական կյանքի մոդելավորում: Արտաքնապես այս ամենը զրույցի ձև ունի, սակայն զրուցակիցները հստակ գիտակցում են, ինչի մասին են խոսում: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ այս մեթոդը պահանջում է աշակերտի և խորհրդատուի առանձնահատուկ հմտություններ, տրամադրվածություն և բավական ժամանակ: Աշակերտական լսարանը պետք է նախապատրաստել ակտիվացման և երևակայական աշխատանքի համար՝ սկզբից քննարկելով ավելի պարզ օրինակներ՝ իրական գործողությունների պլանի վրա հիմնված: Եվ միայն աշակերտներին շահագրգռելուց հետո խորհրդատուն կարող է անցնել ներքին՝ մտացածին պլանի ակտիվացման ընթացակարգին:

Ակտիվացման մեթոդիկան կարելի է դիտարկել նաև ավելի լայն առումով: Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված գրեթե յուրաքանչյուր մեթոդիկա որոշակի ակտիվացնող ներուժ ունի: Անգամ դասախոսությունը, որն ավանդաբար համարվում է ոչ ակտիվ, արդյունավետ կիրառման դեպքում կարող է ավելի ակտիվացնող լինել, քան հոգեթերապևտիկ խմբային աշխատանքը[7], եթե դասախոսությունն իրականացվում է վերբալ և ոչ վերբալ հաղորդակցման միջոցների հմուտ համադրությամբ, ունի տրամաբանական կուռ կառուցվածք և համապատասխանում է լսարանի պատրաստվածությանը, գիտելիքներին, շահերին, ցանկություններին, կարիքներին և կարողություններին:

Համակարգչային մեթոդների կիրառումը բավականին պարզեցրել է մասնագիտական կողմնորոշման թեստային տարբերակները, սակայն ժամանակակից տեխնոլոգիաները պետք է դիտարկվեն զուտ որպես օգնող միջոց խորքային հոգեվերլուծական ռազմավարություններին: Վերջիններս վերաբերում են ինքնորոշվող մարդու ներքին մղումներին և այդ մղումների կառուցողական դինամիկայի ապահովմանը:

Մասնագիտական կողմնորոշման ընթացքում հարկ է հաշվի առնել այնպիսի երևույթներ, ինչպիսիք են «էլիտար կողմնորոշումները»՝ կողմնորոշում դեպի ստեղծագործ և արժանապատիվ գործունեություն: Մյուս կողմից գոյություն ունեն նաև կեղծ էլիտար մղումներ, որոնք ավելի շատ ուղղված են հաջողության արտաքին բնորոշիչների ձեռքբերմանը՝ հարստություն, հեղինակություն ունեցող կրթություն և/կամ մասնագիտություն:

---

[7] Տե՛ս **Сорокина Н. В.** Психология профориентации. Курс лекций. Тула, 2002:

Գաղափարահենք մասնագիտական կողմնորոշումն ուղղված է արժեքների դաստիարակությանը, աշարհայացքի ձևավորմանը: Մասնագիտական կողմնորոշման այս ռազմավարության հիմքում ընկած են իշխող պետական գաղափարները և հասարակության զարգացման գերակայությունները: Հասարակության ինդուստրիալ զարգացման փուլում մասնագիտական կողմնորոշումն ուղղված էր բանվորական աշխատուժի համալրմանն ու վերարտադրությանը, ինչը շատ հստակ նպատակներ էր դնում մասնագիտական կողմնորոշման առջև: Հետարդյունաբերական հասարակության մարտահրավերները մասնագիտական կողմնորոշման գործընթացը զրկեցին հստակ ուղղվածությունից՝ միևնույն ժամանակ ազատություն տալով աշակերտներին:

Մասնագիտական կողմնորոշման ճիշտ ռազմավարություն ընտրելու համար խիստ կարևոր է հասկանալ՝ ինչ գաղափարներ են գերակա հասարակության զարգացման ներկա փուլում: Հնարավոր է, որ հասարակության որոշ հատվածների համար գերակա լինեն նյութական բարիքների կուտակման գաղափարները, մյուսների համար՝ որոշակի երկիր արտագաղթելու գաղափարը և այլն: Թեև նման դիրքորոշումները որպես մասնագիտական կողմնորոշման հիմքում ընկած գործոն քիչ են քննարկվում գիտական գրականության մեջ, սակայն կարող են էական ազդեցություն ունենալ անձի ինքնորոշման վրա:

ՀՀ-ում կատարված տարբեր հետազոտությունները վկայում են, որ այսօր երեխաների մասնագիտության ընտրության հարցում առանցքային դեր են խաղում ծնողները, որոնք չեն կարողանում ապահովել բավարար աջակցություն երեխաներին: Ստեղծված իրավիճակը հաղթահարելու համար, հաշվի առնելով ՀՀ կրթական համակարգի բարեփոխումների ներկա փուլը, կարելի է անել հետևյալ առաջարկությունները.

1. Իրազեկել դպրոցների ավագ դասարանների սովորողներին միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և բուհերի ընդունելության, վերջիններիս կողմից տրամադրվող կրթական ծառայությունների և ուսուցանվող մասնագիտությունների մասին:

2. Մշակել դպրոցների աշակերտների համար միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և բուհերի ներկայացուցիչների հետ հանդիպումների պարտադիր ձևաչափ:

3. Մշակել ավագ և միջնակարգ դպրոցի սովորողի մասնագիտական կողմնորոշման մեթոդաբանություն՝ օգտագործելով լավագույն փորձը (օրինակ՝ «Այբ» դպրոցի մոտեցումները), հաշվի առնելով մասնագիտությունների առկա առաջարկը, օգտագործելով երեխաների նախասիրությունների և հակումների գնահատման արդի մեթոդիկաները:

4. Նախատեսել դպրոցներում սովորողների մասնագիտական կողմնորոշման մասնագետի հաստիք:

Բանալի բառեր – *մասնագիտական կողմնորոշում, ավագ դպրոց, մասնագիտական ախտորոշում, ակտիվացման մեթոդիկա*

ЮЛИАНА МЕЛКУМЯН – *Методические проблемы профессиональной ориентации учеников старших школ РА.* – В статье представлен анализ основных подходов к профориентации в старшей школе и сформулированы методические рекомендации. Профессиональная ориентация – серьёзная задача как для общества в целом, так и для системы образования в частности. Наиболее очевидной целью профориентации является выбор учеником профессии, наиболее соответствующей его способностям. Во-вторых, речь идёт о выборе профессии, востребованной на рынке труда. В-третьих, чтобы обеспечить экономическое, научное и социальное развитие общества, необходимо стимулировать выбор инновационных профессий. Отделение старших классов общеобразовательной школы в качестве самостоятельного образовательного учреждения в РА в ряду прочих преследовало цель обеспечить профессиональную ориентацию учащихся. Старшая школа столкнулась, однако, с рядом концептуальных, организационных и методических проблем.

Ключевые слова: *профессиональная ориентация, старшая школа, профессиональная диагностика, методика активизации*

YULIANA MELKUMYAN – *Methodic Problems of Professional Orientation of High School Pupils in RA.* – This article presents the analysis of the main approaches of professional orientation at high school and formulates recommendations for high schools of Armenia. The process of professional orientation is a major challenge for society as a whole and for the education system in particular. The objectives of this process are different, and often – contradictory. The most obvious purpose of the vocational guidance is the choice of the profession, which is the most suitable to pupil's abilities. Secondly, it is about choosing a profession demanded by the labor market. Third, to ensure the economic, scientific and social development of the society, it is necessary to stimulate the choice of innovative professions. The separation of the senior classes of mainstream schools as an independent educational institution in RA aimed at the improvement of pupils' professional orientation system. However, the high school faced different conceptual, organizational and methodological problems.

Key words: *professional orientation, high school, vocational diagnostics, activation technique*